

## ԱՐԳԱՆԴԻ ՎԳԻԿԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ՈՒ ՅԵՌԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարությունյան Լ.Ս.

Բ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի օնկոլոգիայի թիվ 1 բաժանմունք, Երևան, Հայաստան

Հանձնված Է՝12/10/2013թ., ընդունված Է՝18/01/2014թ.

Արգանդի վզիկի քաղցկեղը նորագոյացությունների առավել տարածված ձևերից մեկն է, բոլոր չարորակ նորագոյացությունների մեջ գրավում է 7-րդ (5.3 %), իսկ կանանց մոտ, չարորակ հիվանդությունների շրջանում՝ 3-րդ տեղը (9.8%):

Վաղ փուլերում ուռուցքային հիվանդությունների կանխարգելումը, ախտաբանական վիճակների հայտնաբերումը և դրա ընթացքի կանխատեսումը հանդիսանում է առավել կարևոր խնդիրներից մեկը, որը պահանջում է հրատապ լուծում:

Հիվանդության փուլի առաջնային ուռուցքի ծավալի պարամետրալ ինվազիայի առկայության պրոգնոստիկ նշանակությունն ապացուցված և ընդունված է վաղուց: Միաժամանակ ուռուցքի կենսաբանական վարքը մնում է անկանխատեսելի անգամ հիվանդության և նույն փուլերում գտնվող հիվանդների մոտ:

Կանխատեսման գործոններն, ուռուցքային հիվանդությունների դեպքում, հաճախ առավել կարևոր դեր ունեն հիվանդության ելքում, քան թերապևտիկ արդյունավետության:

Ճառագայթային և համալիր բուժման արդյունավետության կանխատեսման համար խորհուրդ է տրված հաշվի առնել կանխատեսման այնպիսի կլինիկական գործոններ, ինչպիսիք են՝ հիվանդության փուլը, հյուսվածաբանական տիպը և քաղցկեղային բջիջների դիֆերենցման աստիճանը, տեսանելի ուռուցքի ծավալը, ուռուցքի անատոմիական աճի ձևը, հիվանդի տարիքը, ռեգիոնար լիմֆատիկ հանգույցներում մետաստազների առկայությունը:

Հաշվի առնելով այս գործոնները, հնարավոր է դառնում տալ ռեցիդիվների առաջացման հավանականության կանխատեսում և ամեն կոնկրետ հիվանդի մոտ բուժման անհատականացում:

Արգանդի վզիկի քաղցկեղը մարդու միակ նորագոյացությունն է, որի ժամանակ, 90-95%-ի դեպքում, հայտնաբերվում է մարդու պապիլոմա վիրուսի գենետիկ նյութը: Այդ կարևոր պրոքլեմի լուծման մեջ համապատասխանաբար որոշիչ դերը պատկանում է կանխարգելմանը՝ հատկապես վակցինոկանխարգելմանը: Որովհետև արգանդի պարանոցի քաղցկեղն այն քաղցկեղն է, որից գործնականում 100%-ով կարող է խուսափել պատվաստված կինը:

Կարևորագույն հիմնախնդիր է հանդիսանում սկրինինգի հստակ ծրագրի բացակայությունը՝ կազմակերպչական բոլոր հարցերի մշակումով և միանման մոտեցումներով, ինչպես նաև արգանդի պարանոցի քաղցկեղի դեպքում պրոգնոստիկ մարկերների որոշումները և մեկնաբանությունը:

